ԱԶԳ

# Միջազգային

## Հյուսիսային լիգան դեռեւս հետամտում է Իտալիայից անջատվելու երազանքը

ՀՌՈՄ, ՀՈՒՆԻՍ 12, ՆՏ-AFP: Անջատողական «Հյուսիսային լիգա» կուսակցության ղեկավար Ումբերտո Բոսին երեքշաբթի օրը ձգտում էր ցույց տալ իր ընկճվածությունը տեղական ընտրություններում կրած պարտությունից: «Մենք պետք է արագացնենք մեր գործողությունները անկախության ճանապարհին: Մենք հուսել ենք այս պետության փախճանին», ասել է սակայն Բոսին իտալական թերթերին այն բանից հետո, երբ «Լիգան» մեծ հարված էր ստացել կիրակի օրը կայացած տեղական ընտրությունների առաջին փուլում: Լիգան պահանջում է Իտալիայի հարուստ հյուսիսային շրջանները Իտալիայից անջատելու գաղափարը, ասելով, որ այդ շրջանների հաշվին է ապրում ամբողջ աղքատ Հարավը: Առաջարկվել է նույնիսկ այդ ապագա պետության անվանումը՝ Պադանիա, Մանտուա մայրաքաղաքով, որտեղ գործում է նույնիսկ այդ երկրի խորհրդարան «խորհրդարանը»: Սակայն նույնիսկ այդ «մայրաքաղաքում» «Լիգան» ստացավ միայն 14.5 տոկոս ձայներ, երեք տոկոսով պակաս, քան ապրիլին կայացած խորհրդարանական ընտրություններում:

## Բաքվում Թուրքիայի նոր դեսպան է նշանակվելու

ԲԱՔՈՒ, 13 ՀՈՒՆԻՍ: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Գյոնենսելը հերքել է այն տեղեկությունը, թե Անկարան վաղուց հետ է կանչում Ադրբեջանում իր արտակարգ եւ լիազոր դեսպանին: Բաքվում թուրքական դեսպանատան տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ դեսպան Օրխանը բարձրակարգ դիվանագետ է, որն աշխատանքի մեծ փորձ ունի: Չորս ու կես տարի նա աշխատել է Ռուսիայում, որից հետո արդեն մեկուկես տարի գտնվում է Ադրբեջանում: Պաշտոնավարումն ավարտվում է արտասահմանում աշխատելու վերջնաժամկետը, եւ Թուրքիան ստիպված է փոխարինել նրան: Բաքվում Թուրքիայի նոր դեսպանի դերը կստանձնի Օմեր Ձաուրի Լոգօղլուն, որն այժմ աշխատում է Դանիայում եւ ստացել է ադրբեջանական կողմի պզանումը:

ԿԱՐԾԻՔՆԵՐ

# Ո՞ւմ եւ ի՞նչ չի ներել Ռուսաստանը

***Հունիսի 16-ին կայանալիք նախագահական ընտրությունները ամենից առաջ պատասխան են տալու հենց վերոհիշյալ հարցադրմանը՝ ո՞ւմ եւ ի՞նչ չի ներել Ռուսաստանը: Խոսքը ընտրարշավը շահելու ամենից ավելի իրական հնարավորություններ ունեցող ուժերի՝ ներկայիս նախագահ Բորիս Ելցինի շուրջ համախմբված «դեմոկրատների» եւ Գենադի Զյուգանովին սատարող «ազգային-հայրենասիրական» ճակատի քաղաքական գնահատականի մասին է: Սրանցից յուրաքանչյուրի պարտությունը նշանակելու է նրանց դավանանքի, գործելակերպի եւ առաջարկած ծրագրերի մերժում, անցյալի ու ներկայի դատապարտում եւ երկրի ապագան կրկին նրանց ձեռք տալու հանդեպ անվստահության դրսեւորում:***

ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## Ֆրանսիան չի ուզում դիրքերը զիջել զենքի շուկաներում

Վերջերս Ֆրանսիայի ռազմարդյունաբերական խոշոր ֆիրմաները մտահոգված են այն բանից, որ ամերիկացիները փորձում են թափանցել զենքի նոր շուկաներ, մասնավորապես Միացյալ Արաբական էմիրություններ, որտեղ վաղուց գերիշխում են ֆրանսիական ընկերությունները: Այժմ էլ ռազմարդյունաբերական «Դասո» ավիակոնցեռնը ձգտում է ԱՄԷ-ին վաճառել «Ռաֆալ» տիպի 60 նորագույն ռազմանավ, որը համարվում է լավագույն... իսկ մնացյալը նախատեսվում է ներքին օգտագործման համար, սույն ներկայումս ... բաժինը հասել է 25 տոկոսի: Դա բացատրվում է նախ եւ առաջ նրանով, որ Պենտագոնն ստիպված է եղել 40 տոկոսով կրճատել այդ վարկերը, որոնք ամերիկյան բանակին հատկացվում են մարտական տեխնիկայի գնումների համար: Ներքին շուկայի նեղացումը ռազմարդյունաբերական համալիրին դրդեց փնտրել ար-



digitised by A.R.A.R.@

